«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-115-10.12.2021-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԱՐԿ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝Նախագիծ) 1-ին հոդվածի 6-րդ կետով փոփոխվող 188-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները եւ օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ինքնակամ կառույց իրականացրած անձի հաշվին:»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նախատեսված առաջարկի ընդունման դեպքում նախագծից հանվում է «ուրիշի հողամասում» տերմինը, ինչը թույլ կտա առավել արդյունավետ իրականացնել ինքնակամ կառույցների դեմ իրավական և օրինական պայքարը: Բացի այդ, հարկ է նշել, որ «ուրիշի հողամասում» տերմինը երկիմաստ ընկալման և հետևաբար մեկնաբանման հնարավորությունն էր տալիս, որն էլ շտկելու և օրենքի իրավական որոշակիությունը ապահովելու նպատակով այն հանվել է ըստ առաջարկի:

Բացի այդ, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները սույն առաջարկի միջոցով նախագծից հանել այն դրույթը, որով իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնումը իրականացվելու էր հողամասի սեփականատիրոջ հաշվին, ինչը անընդունելի է:

Առաջարկվող կարգավորմամբ նախատեսվել է հողամասի՝նախկին վիճակի վերականգնումը իրականցնել ինքնակամ կառույց իրականացրած անձի հաշվին՝հաշվի առնելով հենց վերջինիս կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքը, այսինքն վերջինիս մեղքը:

Վերջապես անձը չի կարող կրել պատասխանատվություն, տուժել կամ փոխհատուցել վնաս մի արարքի համար, երբ վերջինս մեղք չունի դրա կատարման գործում: